

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵԻԱՅԼՔ****ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 107-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ**

20 Ապրիլ, 2022-ին, տեղի ունեցավ Հայոց Յեղասպանութեան 107-րդ տարելիցին նուիրուած ջահերով երթ Ս. Յակոբեանց Մայր Տաճարէն դէպի Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Երթին մասնակից էին թէ օտարներ եւ թէ Հայեր, ովքեր պաստառներով եւ դրօշակներով քալեցին դէպի Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ «ԲԱՐԵՆՕՍՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ»: Ապա երթը շարունակուեցաւ դէպի Հայոց Յեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ մոմավառութիւն:

24 Ապրիլ, 2022-ին, երեկոյեան ժամը 19:15-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր, Ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ յիշատակի երեկոյ, որու ընթացքին բանախօսութեամբ հանդէս եկաւ Վուտրօ Ուիլսոնի թոռ՝ Պուշ Տոնալտ Վիլսոն: Երեկոն իր լրումին հասաւ Սրբազան Հօր փակման աղօթքով:

25 Ապրիլ, 2022-ին, Հայոց Յեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց նահատակաց տօնին, առաւօտեան ժամը 9-ին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի ձեռամբ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, քարոզեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Յաւարտ Ս. Պատարագի, հոգեւորականաց դասը եւ Ժառանգաւոր սաներ թափօրով եւ «Այսօր Յարեաւ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազան Հայրը բոլոր ներկաներուն նշխար բաժնեց: Ապա միաբանութիւնը եւ Ժառանգաւոր սաներ Պատրիարքարանէն իջնելով՝ քալեցին դէպի Հայոց Յեղասպանութեան յուշարձան, ուր Լուսարարապետ Սրբազան Հայրը Ս. Աթոռոյս անունով ծաղկեպսակ մը զետեղեց յուշարձանին: Սրբազանին հետեւեցան Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանը, Իսրայէլի եւ Երուսաղէմի մէջ գործող հայ միութիւններու ներկայացուցիչները եւ իրենց կողմէ եւս ծաղկեպսակներ զետեղեցին յուշարձանին:

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 107-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

1 Մայիս, 2022-ին, Երուսաղէմի Եբրայական համալսարանի մէջ տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան նուիրուած յուշ-երեկոյ գիտաժողովին Սուրբ Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ եւ ներկաներուն Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր խօսքը փոխանցեց Ս. Աթոռոյս Դիւանապետ Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Յուշ-երեկոյին ներկայ էին նաեւ Ժառանգաւորաց եւ Սրբոց Թարգմանչաց վարժարանների սաներ, որոնք հանդէս եկան հայերէն ասմունքներով եւ երգերով:

44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՎԻՐԱԽՈՐՈՒԱԾ ՀԵՐՈՍ ԶԻՆՈՒՐՆԵՐ ՄԵՐ ՄԷՋ

Հինգշաբթի, 26 Մայիս, 2022-ին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Պաշտպանության եւ Անվտանգության հարցերու մշտական յանձնաժողովի, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ «Զինուորի տուն» վերականգնողական կեդրոնի համագործակցութեամբ Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին, հայրենիքի պաշտպանության սուրբ գործը կատարելիս վիրաւորուած վեց քաջարի զինուորներ, Ազգային ժողովի պատգամաւորներ եւ աշխատակիցներ, ինչպէս նաեւ «Զինուորի տուն» վերականգնողական կեդրոնի գլխաւոր բուժքոյրը տասնօրեայ ուխտագնացութեամբ ժամանեցին Սուրբ Երկիր:

Ուխտաւոր զինուորներու եւ պետական պաշտօնեաներու պատուիրակուծիւնը Վանքի Մայր դրան առջեւ ջերմօրէն դիմաւորուեցան ժառանգաւոր սաներու, Սբ. Թարգմանչաց վարժարանի պգտիկներու եւ ուսուցիչներու կողմէ: Հայրենիքի պաշտպաններն ուխտագնացութեան ընթացքին իջեւանեցին ժառանգաւորաց վարժարանի յարկին տակ եւ ժառանգաւոր սաներու հետ տասը գեղեցիկ եւ յիշարժան օրեր անցուցին:

Ուրբաթ, 27 Մայիս, 2022-ի առաւօտեան, Մայր հայրենիքէն ժամանած հերոս զինուորները եւ ողջ պատուիրակուծիւնը նախ այցելեցին Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի, որմէ յետոյ այցելեցին Տէրունական սրբավայրեր, ծանօթացան հայկական մշակոյթի հարուստ ժառանգութեան եւ ունեցան զգայացունց ապրումներ: Մինչեւ անգամ զինուորներէն Աշոտ Թադևոսեան մկրտուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ՝ կնքահայր ունենալով ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝ Հոգշ. Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեանը:

Ի պատիւ մեր զինուորներու Իսրայէլի տարբեր քաղաքներու հայ համայնքներու կողմէ կազմակերպուեցան զանազան հիւրասիրութիւններ, հաւաքոյթներ, մշակութային երեկոներ:

Հայրենիքի պաշտպանները տասնօրեայ ուխտագնացութեան ընթացքին պահ մը կտրուեցան իրենց առօրեայ հոգսերէն, հաճելի ակնթարթներ ապեցան եւ հոգեհորոգւած վերադարձան հայրենիք:

ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐՎԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԽԱՐՏԻՅ ՀԱՆԴԷՍ

Հինգշաբթի, 9 Յունիս, 2022-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Սրբոց Թարգմանչաց վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց Երկրորդական բաժնի Ամավերջի հանդէսը, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Դարիպեանի եւ ի ներկայութեան Հոգեշնորհ Հայրերու, ծնողներու եւ հանդիսականներու հոծ բազմութեան: Հանդէսին յայտագիրը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգի եւ Թարգմանչաց շարականի («Որք զարդարեցին») երգեցողութեամբ, զոր կատարեցին Շրջանաւարտները: Երեկոյի ընթացքին շրջանաւարտ սաները հանդէս եկան իրենց սրտի շնորհակալական խօսքերով: Ապա վարժարանի փոխ-տեսուչ՝ Տիար Միհրան Տէր-Մաթոսեան ներկայացուց 2021-2022 ուսումնական

տարուայ կրթական տեղեկագիրը: Հանդիսությունն վերջապետվեց Սրբոց Թարգման-
չաց Վարժարանի Տեսուչ՝ Արժ. Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան շնորհակալական խօս-
քեր ըսաւ բոլոր ուսուցիչներուն, աշակերտներուն, ծնողներուն, եւ յատկապէս
Լուսարարապետ Սրբազան Հօր՝ իր հայրական վերաբերմունքին համար: Ապա Լուսա-
րարապետ Սրբազան Հայրը, յանձնեց հինգ շրջանաւարտներու վկայականներն ու
առաջադէմ աշակերտներու մրցանակները: Մրցանակներու բաշխումէն յետոյ Սրբա-
զան Հայրը կատարեց փակման խօսքը եւ իր պատգամը տուաւ Շրջանաւարտներուն:
Երեկոն փակուեցաւ «Պահպանիչ»-ով եւ «Հայր մեր»-ով:

ՈՏԵԱԳՆԴԱԿԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽԱՂ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ՅՈՒՆԱՅ ՀՈԳԵԻՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Հինգշաբթի, 9 Յունիս, 2022-ի առաւօտեան, Հայոց վանքէն ներս գտնուող Ժա-
ռանգաւորաց Վարժարանի խաղաղաշտին մէջ Ժառանգաւոր սաներ եւ Յունաց հոգե-
ւոր վարժարանի ուսանողներ ոտնագնդակի ընկերային խաղ ունեցան խանդավառ
մթնոլորտի մը մէջ: Խաղն առիթ հանդիսացաւ Հայոց եւ Յունաց Պատրիարքարաններու
հոգեւոր երկու վարժարաններու ուսանողներու միջեւ նոր ծանօթութեան եւ մտերմու-
թեան:

ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

14 Յունիս, 2022-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս
Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան Սրբազան Հօր տեղի ունեցաւ Ժա-
ռանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի 179-րդ Ամալերջեան հանդէսը:

Հանդէսի սկզբնաւորութեան Միաբանութիւնը դիմաւորուեցաւ Ժառանգաւորաց
վարժարանի «Սիրտ ի սիրտ» հիմներգի երգեցողութեամբ, ապա բացման խօսքով հան-
դէս եկաւ վարժարանի փոխ-տեսուչ Բարշ. Աշոտ Սարկաւազ Ղազարեան: Երեկոյի ողջ
ընթացքին Ժառանգաւորաց Վարժարանի շրջանաւարտներ եւ սաներ հանդէս եկան
իրենց ուղերձներով, ասմունքով, մեներգերով ու խմբերգերով, ինչպէս նաեւ դաշնա-
կի եւ թառի գեղեցիկ կատարումներով: Հանդիսութեան վերջաւորութեան Վարժարա-
նի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վարդապետ Զաքարեան ներկայացուց 2021-2022
տարուայ ուսումնական-կրթական տեղեկագիրը, ապա հրաւիրեց Լուսարարապետ
Սրբազան Հայրը, որպէսզի յանձնէ Շրջանաւարտներու վկայականները ինչպէս նաեւ
վարժարանի եւ Ընծայարանի առաջադէմ ուսանողներու մրցանակները: Վկայական-
ներու եւ մրցանակներու բաշխումէն յետոյ Տեսուչ Հայր Սուրբը հրաւիրեց Լուսարարա-
պետ Սրբազան Հայրը, որպէսզի իր սրտի խօսքը ըսէ Շրջանաւարտներուն եւ կատա-
րէ փակման խօսքը: Երեկոն փակուեցաւ Ս. Աթոռոյս Օրհներգով եւ «Պահպանիչ»-ով,
ապա ներկաներ պատուուեցան հիւրասիրութեամբ:

Այս տարի Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ուսանողներու ընդհա-
նուր թիւը քսանհինգ էր: Ընծայարանէն ցաւօք շջանաւարտներ չունեցանք, իսկ Ժա-
ռանգաւորաց Վարժարանի եօթ շրջանաւարտներն էին. Դպիրներ՝ Էտկար Բաղդասար-
եան, Խաչիկ Սարգսեան, Յարութիւն Անդրիասեան, Յովհաննէս Խումարեան, Նուէր

Գեղամեան, Ռուբեն Յակոբեան եւ Վրոյր Պետրոսեան:

ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԱՅՅԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՅԱՏԱԿԻ ԵՒ ՀԻՄՆԵՐՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄՐԱՅՄԱՆ ՎԱՅՐ

Հինգշաբթի, 16 Յունիս, 2022-ին, Սուրբ Յարութեան տաճարի իրաւատէր երեք համայնքներու հոգեւոր պետերը այցելեցին տաճարէն ներս կատարուող յատակի վերանորոգման եւ հիմերու ամրացման աշխատանքներու վայր՝ մօտէն ծանօթանալու կատարուող աշխատանքներուն: Կատարուած եւ կատարուելիք աշխատանքներու մասին հոգեւոր պետերուն հանգամանօրէն բացատրութիւններ տուին հնագիտական եւ վերանորոգման աշխատանքներն իրականացնող խումբերու ղեկավարները:

ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՅՔԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ ՆԱՐԵԿ ՍԱՐԿԱԿԱԳ ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ

Շաբաթ, 25 Յունիս, 2022-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ սպասաւոր եւ Հայոց բանակի զնդերէց, 44-օրեայ պատերազմի ընթացքին նահատակուած բարեյիշատակ Նարեկ Սարկաւագ Պետրոսեանին նուիրուած յուշ-երեկոյ: Նախ բացման խօսքով հանդէս եկաւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան, ապա ցուցադրուեցան Նարեկ Սարկաւագի մասին պատմող երկու շարժապատկերներ: Յուշ-երեկոյի ընթացքին ժառանգաւորաց երգչախումբը կատարեց «Տղերքը չկան», «Կռունկ» եւ Նարեկ Սարկաւագի սիրելի «Սարգարապատ» երգերը, իսկ Բարեշնորհ Հրայր Սարկաւագ Լալայեան, ով նոյնպէս եղած է Հայոց Բանակի զնդերէց, մասնակցած է 44-օրեայ պատերազմին, եւ մօտէն կը ճանչնար Նարեկ Սարկաւագը, կը պատմէր անոր մասին պատմութիւններ:

Յուշ-երեկոյի աւարտին, Հայոց ցեղասպանութեան նուիրուած խաչքար-յուշարձանին առջեւ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ:

ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԺՕ ՊԱՅՏԸՆԻ ԱՅՅԸ ԲԵԹՂԵՇԷՄԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏԱՃԱՐ

Ուրբաթ, 15 Յունիս, 2022-ին, ԱՄՆ նախագահ Տիար Ժօ Պայտըն այցելեց Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան տաճարի հայկական եկեղեցի եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ: Պատրիարք Սրբազան Հայրը Տիար Պայտընի հետ ունեցած առանձնազրոյցի ընթացքին նախ շնորհակալութիւն յայտնեց անոր՝ Հայոց ցեղասպանութիւնն ընդունելու համար, ապա խօսեցան այլ թեմաներու մասին: Հանդիպման առիթով որպէս յիշատակ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահ Պայտընի նուիրեց հայկական յախճապակեայ պնակ եւ նուռ:

ՍԱՐԿԱԽԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնն ու Սաղիմահայ համայնքը դարձեալ հոգեւոր ցնծութեան օրեր ապրեցան 25-26 Յունիս, 2022-ին:

25 Յունիս, 2022-ին, երեկոյեան ժամերգութենէն եւ Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոց Էջմիածնի տօնի նախատօնակէն ետք, Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ, Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի ձեռամբ կատարուեցաւ Սարկաւազական կոչման արարողութիւնը՝ Սուրբ Աթոռոյս Ուրարակիրներէն Տրց. Գրիգոր Թաքուշեանի եւ Տրց. Յովհաննէս Խուտավերտեանի: Ընծայեալները ծնրադիր յառաջացան դասի մուտքէն եւ Ձեռնադրիչ Պատրիարք Սրբազան Հօրմէն ստացան Կիսասարկաւազութեան աստիճան: Արարողութեան խարտաւիլակն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան իսկ առընթերական՝ Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան: Ընծայեալները ապա, կարմիր բազկուրարներ իրենց թեւերուն, մեկնեցան Ս. Յարութեան տաճար, մասնակցելու Տնօրինական Ս. Տեղեաց թափօրին:

26 Յունիս, 2022-ին, Շաբաթ առաւօտ, ձեռնադրութիւնն էր երկու Սարկաւազներու, անոնց՝ որոնք իրենց ուսերը պատրաստած էին ընդունելու լուծը, «մաքուր եւ սուրբ ուրար»-ով խորհրդանշուած:

Ընծայարանի երկու ուխտեալներ՝ Գրիգոր Սրկ. Թաքուշեան եւ Յովհաննէս Սրկ. Խուտավերտեան, ձեռամբ Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի պաշտօն առին Աւետարանի խօսքով եւ խունկի անուշահոտութեամբ լեցնելու Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Այս առիթով, «Սիոն» կը շնորհաւորէ նորընծայ սարկաւազներուն, եւ սրտագինս կ'ըսէ. «Բարեաւ գնացէք ընդ այս ճանապարհ... եւ թող ուրարնիդ փորուրար դառնայ»:

ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԱՍՈՐԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՐ ԳԱԲԻՐԷԼ ՏԱՀՈՅԻ

Երկարատեւ հիւանդութենէ ետք ի Տէր հանգեաւ Երուսաղէմի Ասորւոց Արքեպիսկոպոս Մար Գաբրիէլ Տահօ: Ս. Մարկոս եկեղեցւոյ մէջ կատարուած «Տան կարգ»-ին Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցան Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան եւ Աւագ Թարգման՝ Հոգշ. Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Ննչեցեալի կտակին համաձայն, անոր մարմինը տեղափոխուեցաւ Սուրիա եւ ամփոփուեցաւ տեղւոյն Ասորւոց գերեզմանատան մէջ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ԱՐԴ. ԱԼՈՅԵԱՆ